

մեծահանդէս նախատօնակը՝ նախագահութեամբ Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր:

Գիշերասկիզբին, նոյն տաճարին մէջ պաշտուեցան «Եկեացէ՛»ի «Հսկման» կարգերը և ապա առաւօտեան ժամերգութիւն: Հանդիսապետն էր Տ. Արիս Արք. Շիրվանեան: Արարողութիւնները վերջ գտան գիշերուայ ժամը 10:00-ին:

Կիրակի, 30 Օգոստոս. «Վերափոխումն Ս. Աստուածածնի». Առաւօտեան ժամը 9:00-ին Տ. Սեւան Արք. Դարիպեանի գլխաւորութեամբ, միաբան հայրեր ինքնաշարժով մեկնեցան Գերեսեմանի ձորը ու «Հռաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տ. Պարետ Ծ. Վրդ. Երեցեան, եպիսկոպոսական խոյր ի գլուխ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատոյգ հանդիսաւոր Ս. Պատարագը և յաւուր պատշաճի քարոզեց: Ս. Պատարագէն ետք Ս. Կոյսի Գերեզմանին վրայ կատարուեցաւ «Անդաստան»: Երբ ու դարձի թափօրներուն նախագահեց Տ. Սեւան Արք. Դարիպեան: Արարողութիւնները կատարուեցան կ. ա. Ժամը 11:45-ին:

Երկուշաբթի, 31 Օգոստոս. «Յիշատակ Մեռելոց»: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Գեորգ Արք. Հայրապետեան, ապա Տ. Արիս Արք. Շիրվանեանի նախագահութեամբ կատարուեցաւ հոգեհանգստեան կարգը ազգիս համօրէն ննջեցեալներու հոգիներու փրկութեան համար:



Ս. Աստուածածնայ Տաճարի մուտքը

ԵՐԶԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ ՎԱԶԳԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳՈՀԱՐ ԽՕՍՔԵՐԷՆ



Անցեալը մոռացութեան տուած ժողովուրդ մը կը նմանի մարդու մը, որ կորսնցուցեր է իր յիշողութիւնը:

Սակայն ճշմարիտ է նաեւ այն, որ երբ ժողովուրդ մը կանգնած կը մնայ անց-

եալի ժառանգութեան վրայ առանց ներկայ լիութեամբ ու ստեղծագործօրէն ապրելու, առանց նոր արժէքներ ստեղծելու նոր ժամանակներու տարագով, այդ ժողովուրդի առջեւ կը փակուին դէպի ապագայ տանող դուռները: Որքան ալ հարուստ եղած ըլլայ ժողովուրդի անցեալի ժառանգութիւնը, այդ կը դառնայ թանգարանի առարկայ:

Այո՛, դո՛ւն ժողովուրդ Հայոց, դուն «հօտ փոքրիկ», անգին, անմման, հազիւ փրկուած պատմութեան արհաւիրքներէն և վերջապէս հասած խաղաղ ու անվտանգ կեանքի ափին, դուն թեւեղ երկինք տարածած, աղօթէ այսօր, և մենք ալ քեզի հետ, որ Յարութեան լոյսը յաղթէ խաւարին, մէզին, բարին՝ չար ձեռքին, արդարութիւնը՝ սուտին, կեղծիքին, ազատութիւնը բռնութեան դաւին, խաղաղութեան երկնառաք ոգին՝ պատերազմի մահուան ոյժերուն, զի «յարեաւ Զրիստոս» արեգակն արդար:

*
* *

Ի՛նչ ունայնութիւն հոգեւորականի մը համար դրամ սիրել և ձգտիլ հարստութիւն դիզելու, երբեմն նոյնիսկ տգեղ և ապօրէն միջոցներով: Ինչքա՛ն աղքատութիւն կայ այդպիսի հարստութեան մէջ: Եւ ինչքա՛ն անկոռնչելի հարստութիւն ունին բոլոր անոնք, որ Պօղոս առաքեալի նման ոչինչ ունին, բայց ամէն բան ունին: